

**ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՄԲ ՏՈՒԺՈՂԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ
ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՐԹՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ**

Ս. Ա. ԴԻԼԲԱՆԳՅԱՆ

Հանրապետությունում իրականացվող իրավական ռեֆորմի հիմնական խնդիրներից է քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը: Այսօր գործող քրեական դատավարության օրենսդրության գրեթե բոլոր ինստիտուտները ենթակա են արմատական վերափոխման, այդ թվում նաև՝ դատավարության մասնակիցների իրավական փնտհիմն վերաբերող հարցերը: Առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում հանցագործությունից վնաս կրած անձանց շահերի պաշտպանությունը քրեական դատավարությունում:

Հանցագործության կատարման հետևանքով անձին կարող է պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Պարզելով, որ հանցագործությամբ քաղաքացուն պատճառվել է վերը նշված վնասներից որևէ մեկը, քննիչը իր նախաձեռնությամբ կամ այդ անձի հայտարարության հիման վրա՝ որոշում է կայացնում նրան որպես տուժող ճանաչելու մասին (ՀՀ քր. դատ. օր.-ի 129 հոդված):

Քանի որ բարոյական վնասը հանդիսանում է հանցագործությամբ անձին տուժող ճանաչելու օրենքով նախատեսված հիմքերից մեկը, հետևաբար տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նրան պատճառված բարոյական վնասի հատուցումը:

Նշված պրոբլեմը գործող քրեական դատավարության օրենսդրությամբ չի կարգավորված, իսկ իրավաբանական գրականության մեջ սահմանափակ ուսումնասիրության է ենթարկվել:

Տուժողի բարոյական շահերը հանցագործության հետևանքով խախտված բարոյական արժեքներն են: Տուժողի պատիվը և արժանապատվությունը այն բարոյական արժեքներն են, որոնց նկատմամբ կատարված ոտնձգության հետևանքով ոտնահարվում են նրա բարոյական շահերը: Քրեական դատավարության խնդիրն է ապահովել այդ բարոյական շահերի վերականգնումը:

Այսօր տուժողի բարոյական շահերի պաշտպանության ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է բարոյական վնասի վերականգնման հետ կապված հարցերը լուծել օրենսդրականորեն:

Երբ տեղի է ունենում անձի պատվի և արժանապատվության ստորացում, վարկաբեկում, օրենսդիրը տուժողին իրավունք է վերապահում ընտրել պաշտպանության քրեա-իրավական կամ քաղաքացիա-իրավական եղանակը: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քաղաքացիներն ավելի շատ ձգտում են ընտրել վերջին եղանակը: Այս հանգամանքը հիմնականում բացատրվում է նրանով, որ քրեական և քրեադատավարական օրենսդրությունը չի նախատեսում բարոյական վնասի հարթման այնպիսի մեխանիզմ, ինչպիսին առկա է քաղաքացիական օրենսդրությունում:

Քրեական և քրեական դատավարության օրենսդրության կարևոր խնդիրներից մեկը պետք է համարել բարոյական վնասի հարթումը, որն արտահայտվում է անձի պատվի, արժանապատվության, սոցիալական հեղինակության վերականգնման մեջ: Անշուշտ, ամեն տեսակի բարոյական վնաս չէ, որ հնարավոր է ռեալ վերացնել:

Զնայած իր կարևորությանը՝ մինչև այժմ այս հարցը չի ստացել օրենսդրական պատշաճ կարգավորում: Իրավաբանական գրականության մեջ առաջարկություններ են արվել կիրառության մեջ դնել բարոյական վնասի հարթման տարբեր ձևեր¹:

¹ Այս հարցը քաղաքացիական իրավունքում լուծված է դրականորեն: Համաձայն ՀՀ Քաղ. օր.-ի 7-րդ հոդվածի՝ «յուրաքանչյուր քաղաքացի կամ կազմակերպություն իրավունք ունի դատարանով պահանջելու իր պատիվն ու արժանապատվությունը ստորացնող տե-

Քանի որ բարոյական և գույքային արժեքները հավասարազոր են, ուստի բարոյական վնասի հարթման համար նույնպես պետք է նախատեսել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը: Բարոյական վնասի հարթման անհրաժեշտության մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ այսօր անձի պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործությունները մեծ տարածում են ստացել: Մեզ թվում է, որ այս հարցի օրենսդրական դրական կարգավորումը կարող է ունենալ նաև խափանող նշանակություն²:

Գործող օրենսդրությունը դատարանին չի պարտավորեցնում տուժողի պահանջով մամուլում կամ հեռուստատեսությամբ կամ այլ եղանակով հաղորդում տալ անձին նշավակող կամ ստորացնող տեղեկությունների կեղծության մասին: Այս կապակցությամբ պետք է համաձայնել այն առաջարկությանը, որ անձի պատվին և արժանապատվությանն ուղղված հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարելու և տուժողի հեղինակությունը վերականգնելու համար պետք է դատարանին պարտավորեցնել մամուլի, հեռուստատեսության կամ ռադիոյի միջոցով հասարակությանն իրազեկ դարձնել ինչպես տուժողի արդարացման, այնպես էլ մեղավորի դատապարտման մասին³:

Հանցագործությամբ անձին պատճառված բարոյական վնասի հատուցման մասին հարցը իր դրական լուծումն է ստացել նախկին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1981 թ. մայիսի 18-ի հրամանագրով հաստատված «հետաքննության, նախաքննության, դատախազության և դատական մարմինների անօրինական գործողությունների հետևանքով քաղաքացիներին պատճառված վնասի հատուցման կարգի մասին» կանոնադրությամբ⁴:

Արդարացված անձին պատճառված բարոյական վնասի հատուցումը, այսինքն՝ պատվի և արժանապատվության, սոցիալական հեղինակության վերականգնումն իրականացվում է այն հետաքննության, նախաքննության, դատախազության և դատական մարմինների կողմից, որոնք որոշում են ընդունել կամ կայացրել մեղադրյալին անմեղ ճանաչելու մասին (արդարացման դատավճիռ, քրեական գործը կարճելու մասին որոշում)⁵:

Բարոյական վնասի հատուցման որոշ դրույթների մասին մատնանշված է նախկին ԽՍՀՄ Գերագույն դատարանի 1985 թվականի նոյեմբերի 1-ի պլենումի «Դատարանների կողմից քրեական դատավարությունում տուժողի մասնակցությունը կարգավորող օրենսդրության կիրառման պրակտիկայի մասին» որոշման մեջ: Համաձայն այդ որոշման 8-րդ կետի, «եթե վիրավորանքի կամ զրպարտության մասին գործերը քննելիս պարզվում է, որ քաղաքացուն ստորացնող կեղծ հեղուրանքները կամ նրա պատիվը և արժանապատվությունը արատավորող տեղեկությունները տարածվել են մամուլի միջոցով, դատարանը այդ հանցագործության մեջ ամբաստանյալին մեղավոր ճանաչելիս կարող է դատավճիռի հետ միաժամանակ կայացնել մասնավոր որոշում՝ տուժողին վարկաբեկող հերքված տեղեկությունները հրապարակելու անհրաժեշտության մասին⁶:

Ելնելով վերը շարադրվածից՝ պետք է ընդգծել, որ բարոյական վնասի հարթման նըշված եղանակը նպատակահարմար է կիրառել ոչ միայն արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների, այլև անձի պատվի և արժանապատվության դեմ ուղղված քոլոր մյուս հանցագործությունների համար⁷:

դեկությունների հերքում, եթե այդպիսի տեղեկություններ տարածողը չապացուցի, որ դրանք համապատասխանում են իրականությանը: Եթե քաղաքացու կամ կազմակերպության պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկությունները տարածվել են մամուլի միջոցով, դրանք իրականությանը չհամապատասխանելու դեպքում պետք է հերքվեն նույնպես մամուլի միջոցով: Երբ դրանք բովանդակում են կազմակերպությունից ելնող փաստաթղթում, ապա այդպիսի փաստաթուղթը ենթակա է փոփոխման⁸:

² Տե՛ս Ք. Դ. Рахунов, Существенные вопросы, судопроизводства.— Сб. законность. 1958, № 7, с. 15. Т. Н. Добровольская, Заглаживание морального вреда, причтенного необоснованным привлечением к уголовной ответственности.

³ Տե՛ս И. Я. Щило, Судебная защита чести и достоинства советских граждан. 1985, էջ 56.

⁴ Տե՛ս «Ведомости Верховного Совета СССР», 1981, № 26, с. 840.

⁵ Տե՛ս «Советский уголовный процесс». 1990, с. 412.

⁶ Տե՛ս «Бюллетень Верховного Суда СССР», 1986, с. 10. 13.

⁷ Հանցագործությամբ անձի պատվին և արժանապատվությանը պատճառված բարոյական վնասի հատուցման նման եղանակ սահմանված է Լեհաստանի քրեական օրենսդրությամբ: Համաձայն ԼժՎ քր. օր.-ի 180 հոդվածի՝ «տուժողի առաջարկությամբ դատարանը կարող է որոշում կայացնել մեղադրական դատավճիռը կամ որոշումը մեղադրյալի կամ տուժողի աշխատավայրում, մամուլում կամ համապատասխան այլ ձևով 198

Բարոյական վնասի հարթման վերը նշված եղանակները չի կարելի համարել սպա-
ռիչ: Այլ երկրների օրենսդրությամբ նախատեսված է նաև բարոյական վնասի հատուցման
դրամական եղանակը:

Բնականաբար հարց է առաջանում՝ բարոյական վնասը կարող է արդյո՞ք հանդի-
սանալ քաղաքացիական հայցի առարկա: Գործող օրենսդրության դեմոկրատացմանը և
տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված արդյունավետ
միջոցներից մեկը պետք է համարել քրեական դատավարությունում քաղաքացիական հայ-
ցի ընդարձակումը: Իրավաբանական գրականության մեջ այս հարցը իր տեսական հիմ-
նավորումն է ստացել մի շարք դատավարագետների աշխատություններում⁸:

Նշված հեղինակների կողմից չափազանց ընդարձակվում են քրեական դատավարու-
թյունում քաղաքացիական հայցի պաշտպանության շրջանակները: Դժվար է համաձայնել
այդպիսի ընդարձակ մեկնաբանման հետ, որովհետև այն չի համապատասխանում քրեա-
կան դատավարությունում քաղաքացիական հայցի էությանը: Քանի որ քննարկվող հարցն
անմիջականորեն չի վերաբերվում ուսումնասիրվող թեմային, ուստի ձեռնգրան ենք մնում
մեր առարկությունները հիմնավորելուց:

Վերը նշված դիրքորոշումը ոչ բոլոր դատավարագետների պաշտպանությանն է ար-
ժանացել: Այս կապակցությամբ արդարացի է Վ. Մ. Նոռը, ընդգծելով, որ քրեական
դատավարությունում անձի՝ խախտված բոլոր իրավունքների ու օրինական շահերի հայ-
ցային պաշտպանության ձևը դժվար թե ընդունելի լինի օրենսդրի կողմից և իրակա-
նացվի պրակտիկայում:

Եթե պրակտիկայում գույքային, իսկ առանձին դեպքերում նաև ֆիզիկական վնասի
նյութական հատուցման կապակցությամբ դժվարություններ չեն առաջանում, ապա նույնը
չի կարելի ասել բարոյական վնասի վերականգնման մասին:

Մեր կարծիքով գործող օրենսդրության մեջ բարոյական վնասի նյութական հատուց-
ման ձևի բացակայության հիմնական պատճառը բարոյական վնասի դրամական արտա-
հայտության բացակայությունը չէ:

Իրավաբանական գրականության մեջ բարոյական վնասի դրամական հատուցման
մասին հարցն արժանացել է մի շարք դատավարագետների քննադատությանը: Նրանց
կարծիքով մարդու պատիվն ու արժանապատվությունը, նրա բարոյական ապրումները
չեն կարող հատուցվել դրամով: Բուրժուական իրավունքը և դատական պրակտիկան,
նախատեսելով բարոյական վնասի նյութական հատուցում, ածորհնական գործողություն-
ներով ոտնահարված անձնական բարիքները դարձնում են սպեկուլյացիայի առարկա և
տուժողի վաստակի աղբյուր¹⁰:

Այսօր արմատապես փոխվել է մեր վերաբերմունքը այդ երկրների նկատմամբ: Քրեա-
կան դատավարության օրենսդրության մեջ դեմոկրատական փոփոխությունների իրակա-
նացման կարևորագույն ճանապարհներից մեկը արտասահմանյան օրենսդրության և դա-
տական պրակտիկայի հանգամանորեն ուսումնասիրումն ու ընդօրինակումն է: Այս պա-
հանջը հավասարապես կարող է վերաբերվել նաև բարոյական վնասի նյութական հա-
տուցման հետ կապված հարցերի լուծմանը:

Հետևաբար, դժվար է համաձայնել այն դիրքորոշման հետ, որ բարոյական վնասի
նյութական հատուցման նախատեսումը նսեմացնում է անձի պատիվն ու արժանապատ-
վությունը: Բարոյական վնասի նյութական հատուցման օրենսդրական կարգավորվածու-
թյան նախատեսումը էլ ավելի է ուժեղացնում անձի պատվի և արժանապատվության
պաշտպանության երաշխավորվածությունը:

Խոսելով բարոյական վնասի նյութական հատուցման մասին, պետք է ընդգծել, որ
մինչհեղափոխական ռուսական իրավաբանական գրականության մեջ արտահայտվել են
տարբեր կարծիքներ:

Քաղաքացիական հայցի միջոցով բարոյական վնասի հատուցման հնարավորությունն
արժանացել է ռուս նշանավոր քրեագետների պաշտպանությանը: Այս կապակցությամբ

հրապարակելու մասին, որոնք կայացվել են 174 հոդ. 2 համապատասխան (տե՛ս «Уго-
ловный, уголовно-процессуальный и уголовно-исполнительный кодексе ИИР» М.,
1973, с. 63.

⁸ Տե՛ս Л. Д. Кокорев, Потерпевший от преступления, Воронеж, 1964, с. 95.
В. Г. Даев, Современные проблемы гражданского иска в уголовном процессе, Со-
ветская юстиция, 1972, № 21, с. 12—15.

⁹ Տե՛ս В. Н. Нор, Защита имущественных прав в уголовном судопроизводстве,
Киев, 1989, с. 275.

¹⁰ Տե՛ս В. А. Дубровский, Потерпевший на предварительном следствии, Саратов,
1966, с. 10, М., 1981, с. 70, и т. д.

վ. Սլուշակին նշում է, որ դատարանները պարտավոր են նյութական վնասը գնահատելու ուշադրություն դարձնել նաև բարոյական վնասին և հիմքեր փնտրել որոշելու այն միջոցները, որոնք անհրաժեշտ են դատարանի կողմից օրենքով վերապահված գործողությունների շրջանակներում հատուցել տուժողին պատճառված վնասը¹¹: Այս կարծիքն արժանացել է այլ դատավարագետների բննադատությանը¹²: Նրանք գտնում են, որ քաղաքացիական հայցի միջոցով բարոյական վնասի հատուցումը զուրկ է իրավաբանական հիմքերից:

Այս հարցն արտասահմանյան օրենսդրության մեջ նույնպես միանշանակ ձևով չի լուծվում:

Ֆրանսիայի քրեական դատավարության օրենսդրությամբ այն լուծված է դրականորեն: Այստեղ քաղաքացիական հայցի առարկա թույլատրվում է դարձնել ոչ միայն նյութական, այլև բարոյական վնասը: Համաձայն Ֆրանսիայի քր. դատ. օր.-ի 3-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «քաղաքացիական հայցը կարող է վերաբերվել գույքային, ֆիզիկական և բարոյական վնասի ցանկացած տեսակի, որը քրեական հետապնդման օբյեկտը կազմող փաստի հետևանք է»¹³: Համանման կարգավորում նախատեսված է այլ երկրների օրենսդրությամբ: Այսպես՝ Լեհաստանի քրեական օրենսգրքի 178 հոդ. պր. 2 համաձայն «նախատեսված հանցագործության համար անձին դատապարտելու դեպքում դատարանը կարող է տուժողի, Լեհաստանի Կարմիր խաչի կամ այլ կազմակերպության օգտին որոշել հատուցում 500-ից մինչև 5000 զլոտի»:

Ելնելով վերը շարադրվածից՝ մեզ թվում է, որ քրեական դատավարության օրենսդրության մեջ պետք է սահմանել բարոյական վնասի հարթման հետևյալ եղանակները՝ ա) եթե անձի պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկությունները տարածվել են մամուլի կամ զանգվածային տեղեկատվության այլ միջոցներով, ապա տուժողի առաջարկությամբ դատարանը պարտավոր է դրանք հեռքել համապատասխան միջոցներով կամ մեղադրական դատավճիռը հրապարակել մեղադրյալի կամ տուժողի աշխատավայրում կամ բնակության վայրում:

բ) եթե անձի պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունները քովանդակում են որևէ կազմակերպությունից բխող փաստաթղթերում, ապա դատարանի կողմից անվավեր պետք է ճանաչվեն այդ փաստաթղթերը կամ դրանցում մտցվեն համապատասխան փոփոխություններ:

գ) Պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործությունների համար անձին դատապարտելու դեպքում դատարանը կարող է որոշում կայացնել տուժողի օգտին դրամական հատուցում նախատեսելու մասին:

դ) բարոյական վնասի հարթման եղանակ է հանդիսանում նաև հանցագործությունից տուժած քաղաքացու կամ կոլեկտիվի առջև հրապարակային ներողություն խնդրելը:

С. А. ДИЛБАНЫН—Способы заглаживания морального вреда, причиненного потерпевшему от преступления.— Для обеспечения прав и законных интересов потерпевшего важное значение имеет возмещение причиненного ему морального ущерба. Указанная проблема не урегулирована действующим уголовно-процессуальным законодательством, а также мало изучена в юридической литературе. Поскольку моральные и имущественные интересы равнозначны, то для возмещения морального ущерба также необходимо предусмотреть средства, способствующие защите прав и законных интересов потерпевшего.

Для возмещения нарушений моральных интересов потерпевшего можно применить такие способы возмещения, как денежная компенсация, публично извинение и т. д.

¹¹ Տե՛ս «Устав уголовного судопроизводства» // систематические комментарии. Вып. 1. 1914. М., с. 53:

¹² Տե՛ս **И. И. Фойницкий**, Курс уголовного судопроизводства, т. I, 1889 г., с. 73:

¹³ Տե՛ս Уголовно-процессуальный кодекс Франции, //Перевод с французского, М., 1967, с. 4: